# Գները և խոցելիությունը

*«Հայաստանում պարենային ապրանքների գների մոնիտորինգ»*

Աճեցնենք ավելի շատ,
կերակրենք մեր երկիրը
Աշխարհին առանց սովի



# Սպառողական ապրանքների և ծառայությունների գնաճը 2009-2012 թվականներին, %

| | 2009 | 2010 | 2011 | 2012, 6 ամիս |
|---|---|---|---|---|
| **Գնաճ** | | | | |
| միջին | **3.4** | **8.2** | **7.7** | **2.2** |
| ժ/շ վերջին | **6.5** | **9.4** | **4.7** | **-0.4** |
| **Պարենային ապրանքների գնաճ** (առանց ոգելից խմիչքի և ծխախոտի) | | | | |
| միջին | **-0.9** | **9.4** | **12.3** | **1.5** |
| ժ/շ վերջին | **2.3** | **15.2** | **6.1** | **-2.6** |
| **Ոգելից խմիչքի և ծխախոտի գնաճ** | | | | |
| միջին | **1.4** | **1.5** | **1.1** | **5.3** |
| ժ/շ վերջին | **1.5** | **1.7** | **2.0** | **4.0** |
| **Ոչ պարենային ապրանքների գնաճ** | | | | |
| միջին | **4.7** | **9.6** | **3.4** | **3.9** |
| ժ/շ վերջին | **14.6** | **4.6** | **4.3** | **1.8** |
| **Ծառայությունների սակագների գնաճ** | | | | |
| միջին | **10.4** | **6.8** | **3.6** | **2.0** |
| ժ/շ վերջին | **10.3** | **4.2** | **2.9** | **1.4** |

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՏԶՀԿ հաշվարկներ

# Սպառողական գների դինամիկան 2010-2012 թվականներին
(2010-ի հունվ=100%)




Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՏԶՀԿ հաշվարկներ

# Պարենային ապրանքախմբերի գնաճի ցուցանիշները, %

| Կշիռը ՍԳԻ-ում | Ապրանքախմբի անվանումը | 2010 միջին | 2010 վերջ | 2011 միջին | 2011 վերջ | 2012 (6 ամիս) միջին | Հուն-12-ը Դեկ -11-ի համեմատ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 10.6 | Հացամթերք | **4.7** | **13.2** | **11.0** | **2.3** | **0.1** | **2.3** |
| 10.2 | Մսամթերք | **14.9** | **17.6** | **12.0** | **12.7** | **10.2** | **0.8** |
| 0.7 | Ձկնամթերք | **10.4** | **-6.6** | **2.3** | **1.6** | **3.7** | **0.2** |
| 4.2 | Կաթնամթերք | **4.1** | **21.1** | **18.6** | **6.8** | **3.8** | **-4.8** |
| 1.4 | Ձու | **-6.2** | **25.7** | **21.8** | **-0.3** | **2.1** | **-5.4** |
| 3.2 | Կենդանական/բուսական յուղ | **7.8** | **10.9** | **17.0** | **11.8** | **5.0** | **-1.5** |
| 3.7 | Միրգ | **13.5** | **19.0** | **15.8** | **-12.3** | **-27.6** | **7.7** |
| 6.3 | Բանջարեղեն և կարտոֆիլ | **25.2** | **30.7** | **10.1** | **-1.0** | **-6.9** | **-26.2** |
| 1.1 | Շաքարավազ | **19.5** | **6.5** | **20.9** | **35.4** | **22.5** | **-3.7** |
| 3.5 | Սուրճ, թեյ, կակաո | **3.4** | **1.8** | **10.5** | **18.9** | **15.6** | **3.0** |
| 2.0 | Հրուշակեղեն | **7.0** | **6.6** | **5.6** | **12.2** | **13.0** | **2.2** |
| 1.0 | Այլ մթերք | **3.6** | **2.5** | **0.5** | **2.3** | **5.2** | **2.8** |
| 0.6 | Ոչ ոգելից խմիչք | **-0.4** | **-0.1** | **1.0** | **1.7** | **2.6** | **3.1** |



Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՏՁՀԿ հաշվարկներ

# Հայաստանում պարենային զամբյուղի էներգետիկ կառուցվածքը
(1 շնչի հաշվով օրական 2,412 կկալ = 100%)




Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՀՀ առողջապահության նախարարության մեթոդաբանություն, ՏԶՀԿ հաշվարկներ

# Պարենային զամբյուղի հիմնական մթերքների գնաճը
(%-ով 2010-ի առաջին եռամսյակի համեմատ)




Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՏԶՀԿ հաշվարկներ

## Հիմնական սննդամթերքի ձեռք բերման սպառողական ծախսերը 2009 և 2010թթ (ըստ սպառողական ծախսերի դեցիլային խմբերի, մեկ շնչի հաշվով, միջին ամսական)




Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՏԶՀԿ հաշվարկներ

**Հիմնական սննդամթերքի սպառմանն ուղղված ծախսերի դինամիկան 2010-ին 2009-ի համեմատ** (ըստ սպառողական ծախսերի դեցիլային խմբերի, մեկ շնչի հաշվով, միջին ամսական)




Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՏԶՀԿ հաշվարկներ

- *Սպառման ծավալներն I-IV խմբերում միջինում կրճատվել են 10.6 փոկոսով. I դեցիլում՝ 14 փոկոսով, IX-ում՝ 3.5 փոկոսով*

- *Սփորին դեցիլային խմբերում սպառումը զիջում է ՀՀ Առողջապահության նախարարության կողմից սահմանված նորմերին. միայն հացամթերքն է սպառվում նորմայից շատ*

# Հացամթերքի սպառման ֆիզիկական ծավալների և ծախսերի փոփոխությունը 2010 թվականին (տոկոս)




Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՏԶՀԿ հաշվարկներ

# Սամթերքի սպառման ֆիզիկական ծավալների և ծախսերի փոփոխությունը 2010 թվականին (տոկոս)




Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՏԶՀԿ հաշվարկներ

## Հիմնական սննդամթերքի սպառմանն ուղղված ծախսերի դինամիկան 2011-ին 2010-ի համեմատ (ըստ սպառողական ծախսերի դեցիլային խմբերի, մեկ շնչի հաշվով, միջին ամսական)




Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՏՁՀԿ հաշվարկներ

## Հայաստանում գնաճը պարունակում է մեծ սոցիալական ռիսկեր

- *Առավել բարձր եկամուտ ունեցողների սպառման մակարդակը մոտ 8 անգամ գերազանցում է ամենաաղքատների սպառումը*

- *Սննդամթերքի սպառումն ամենահարուստ և ամենաաղքատ դեցիլներում փարբերվում է մոտ 5 անգամ*

- *Ստորին դեցիլային խմբերում սպառումը զիջում է ՀՀ Առողջապահության նախարարության կողմից սահմանված նորմերին. միայն հացամթերքն է սպառվում նորմայից շատ*

## Հիմնական պարենամթերքի միջին ամսական սպառումը 2010-ին, ըստ 1-ին և 10-րդ դեցիլային խմբերի (մեկ շնչի հաշվով, կգ)






Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ

## Գնաճը բեռ է բոլոր տիպի ընտանիքների համար

Հնարավոր է

- *Պահպանել նախկին սպառման կառուցվածքը և մակարդակը - լրացուցիչ ծախսեր*
- *Ճշգրտել սպառողական զամբյուղը՝ դեպի առավել էժան ընտրություն*
- ***Աղքատ խավը**, չունենալով սպառվող ապրանքների փոխարինման այլընտրանք, **կրճատում է սպառումը**: Կրճատելով նվազագույն ապառման պահանջներին չբավարարող զամբյուղը, **շատերը ստիպված են թերսնվել***

# Գնաճի բնույթը Հայաստանում

## *Պահանջարկի գնաճ, թե՝ առաջարկի գնաճ*

- Գնաճը Հայաստանում գերազանցապես պայմանավորված է **առաջարկի գործոններով**

## *Մակրոտնտեսական, թե՝ միկրոտնտեսական ըստ բնույթի*

- Ընդհանուր տնտեսական անկումը չէ, որ հանգեցնում է մի շարք ապրանքների արտադրության և առաջարկի կրճատման. **(մակրո չէ)**
- Գնաճը կախված է կանկրետ շուկայում առաջարկի ծավալների և գների փոփոխությունից. **(միկրո է)**
- Գնաճն ունի **միկրոտնտեսական բնույթ**, սակայն բոլոր շուկաներում խնդիրների ընդհանրությունը հանգեցնում է **մակրոտնտեսական** հետևանքների:

***Հայաստանում գնաճը կախված է***

***առանձին ապրանքային շուկաներում***

***առաջարկի պայմաններից,***

***որոնք*** *հաճախ* ***ունեն***

***արտաքին ազդեցություններ***

***և*** *առանձին դեպքերում*

***կարգավորման ազդեցություններ***

# Գնաճի զսպումը միայն ՀՀ ԿԲ գերխնդիրը չէ

- *Արդյունաբերական քաղաքականություն*
- *Սոցիալ-տարածքային զարգացման քաղաքականություն*

## Քաղաքականության ուղղություններ կամ նպատակներ.

- *Պարենային ապահովվածություն*
- *Ներմուծման կարգավորում*
- *Սպառողի իրավունքներ*
- *Շուկաների կարգավորում*
- *Սոցիալական երաշխիքներ և պետական աջակցություն*

## Պարենային ապահովվածություն

- Պարենի միջազգային գների աճը և գնաճի ներմուծման ռիսկը խորանալու է,
- Պարենային ապահովվածության մակարդակը ցածր է, սակայն առկա է մեծ ներուժ,
- Նպատակային լայնամասշտաբ ծրագրերի իրականացում աղքատ համայնքներում, ընդգրկելով միգրանտներին… (նույնիսկ արտաքին վարկերի հաշվին, նույնիսկ Երևանի ենթակառուցվածքային ծրագրերի փոխարեն)

## Ներմուծման կարգավորում

- Արտաքին առևտրի կարգավորման համակարգը տնտեսապես ձեռնտու չէ,
- Պետք է ընդլայնել ներմուծման խաչընդոտները,
- Ոչ սակագնային միջոցների կիրառումը կարող է մեծ տնտեսական օգուտներ բերել…

## Սպառողի իրավունքներ

- Թե՛ ներմուծվող և թե՛ հայկական ծագման շատ ապրանքատեսակներ չեն բավարարում որակի նվազագույն պահանջներին,
- Որակյալ և էկոլոգիապես մաքուր սննդամթերքի նկատմամբ պահանջարկն աճում է,
- Վտանգված է բնակչության և սերունդների առողջությունը,
- Առողջապահական և անվտանգության եվրոպական ստանդարտների կիրառումը կունենա ներքին արտադրության խթանման և սպառողների առողջության պահպանման դրական ազդեցություն՝ խնդիր չստեղծելով ԱՀԿ պարտավորությունների տեսանկյունից:

## Շուկաների կարգավորում

- Շուկաները փոքր են և մոնոպոլացված,
- Մեծ է պայմանավորվածությունների հավանականությունը,
- Միփումների շարունակականությունը ենթադրում է փոքր և միջին շուկաների մոնոպոլիզացիայի աճ:
- Մոնոպոլիաների կարգավորման հետաձգումը զսպում է ազատությունը, խորացնում անհավասարությունը, հանգեցնում արտագաղթի և սոցիալական լարվածության:
- "Օլիգարխները" պետք է իրենց փնտեսական զարգացման ծրագրերը կապեն արտաքին շուկաների հետ՝ ներքին շուկան թողնելով փոքր ու միջին բիզնեսին:

# Սոցիալական երաշխիքներ և պետական աջակցություն

- Գների զսպման և սոցիալական ազդեցության բարելավման միջոցառումները նախնական փուլում կարող են գների աճի ճնշումներ պարունակել:
- Անհրաժեշտ են սոցիալական երաշխիքների և պետական աջակցության բաղադրիչներ:
- Արդյունավետ ծրագրերը, որոնք կիրականացվեն աղքատ համայնքներում, վստահաբար աջակցություն կգտնեն և՛ դոնորների և՛ սփյուռքի կողմից:
- Պետական քաղաքականությունն այսօր ուղղված է առկա բոլոր սոցիալ-տնտ սական հիմնախնդիրների միաժամանակյա լուծմանը:

  Հարկ է փոխել մոտեցումները
- Անհրաժեշտ են ֆոկուսացված և կոնկրետ թիրախների ուղղված, փուլային քաղաքականության ծրագրերի համալիր կիրառում՝ կապված կոնկրետ մթերքների արտադրության արժեշղթայի հետ:

## Հիմնական եզրակացություններ

- ՍԳԻ-ն չի արտահայտում գնաճի սոցիալական ազդեցության ամբողջական պատկերը
- Հասարակության անապահով խմբերում հիմնական սննդամթերքների սպառումը զգալիորեն զիջում է ՀՀ առողջապահության նախարարության կողմից սահմանված սպառման նորմաները
- Գների աճը հասարակության բոլոր խմբերում ուղեկցվել է սպառման ծավալների կրճատմամբ. ոմանք ճշգրտում են զամբյուղները, ոմանք էլ՝ կրճատում:
- Պարենային անվտանգության և ներքին արտադրության աջակցության խնդիրները խիստ արդիական են. հիմնական սննդամթերքների գծով երկրի ինքնաբավության մակարդակը շատ ցածր է, որը նաև գնաճի ներմուծման և անկառավարելիության գործոն է հանդիսանում
- Կառավարության կողմից գնաճի սոցիալական հետևանքները գնահատելու և մեղմելու ջանքերն անբավարար են:

## Առաջարկություններ

- Ներդնել գնաճի սոցիալական հետևանքների մոնիտորինգի և գնահատման մասնակցային համակարգ,
- Ներդնել ընտանեկան նպաստների և կենսաթոշակների տարեկան ինդեքսավորման համակարգ՝ հիմքում ունենալով պարենային ապրանքների գների ինդեքսը,
- Սահմանափակել արտադրանքի որակի լավագույն ստանդարտներին չբավարարող սննդամթերքի ներմուծումը Հայաստան,
- Ներդնել պարենային ապրանքների և սննդամթերքի ներքին արտադրության աջակցության պետական ծրագիր (մսամթերք, բանջարեղեն և այլն), որը կունենա նաև հստակ գործիավորված համայնքային կլաստերների զարգացման բաղադրիչ:

# Շնորհակալություն